

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2019 թվականի
օգոստոսի 28-ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2019-2020 ուստարվա մագիստրատուրայի և բակալավրիատի առաջին կուրսի ընդունելությունը ֆակուլտետում:
2. 2018-19 ուստարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների ամփոփում:
3. 2018-19 ուստարվա կուրսային աշխատանքների պաշտպանություն արդյունքների ամփոփում:
4. Մասնագիտական պրակտիկայի կազմակերպումը մագիստրատուրայում:
5. Ընթացիկ քննությունների կազմակերպման հարցը ֆակուլտետում:
6. Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի դասընթացներում հետազոտական բաղադրիչ ներմուծելու մասին:
7. ՀՀ Գիտաբերության թեմատիկ ֆինանսավորման ընթացիկ հաշվետվություն:
8. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ 2019-20թթ ուստարվա մագիստրատուրայի և բակալավրիատի առաջին կուրսի ընդունելության հարցի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ընդունելության դրական արդյունքները բակալավրիատում և նշեց, որ մագիստրատուրայում բոլոր մասնագիտությունները լրացված են: Ամբիոնի վարիչներ՝ Հ.Ավանեսյանը, Ն.Խաչատրյանը, Ս.Զաքարյանը տեղեկատվություն տվեցին իրենց մասնագիտացումների ընդունելության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունելի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝ 2018-19թթ ուստարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց քննությունների արդյունքները, որոնք դրական էին: Նշեց, որ ամբիոնները հստակ են աշխատում:

Արտահայտվեցին նաև Հ. Ավանիսյանը, Ս. Զաքարյանը, Է. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունելի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ 2018-19թթ. ուստարվա կուրսային աշխատանքների պաշտպանության արդյունքների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Բաղդասարյանը նշեց, որ հատկապես հեռակա ուսուցման կուրսայինների պաշտպանության արդյունքները գոհացուցիչ չեն, ուսանողները կուրսայինների նկատմամբ անտարբեր են:

Առաջարկություն եղավ կուրսայինների պաշտպանությունը տեղափոխել հունվար-փետրվար ամիսներին, որպեսզի մայիս ամսվա ուսումնական ծանրաբեռնվածությունը մի փոքր թեթևանա:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Քննարկել ամբոններում և առաջարկ տալ:

4. ԼՍԵՑԻՆ՝ Մասնագիտական պրակտիկայի կազմակերպման հարցը մագիստրատուրայում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամիրնի վարիչներ՝ Ն.Խաչատրյանը, Գ.Շահվերդյանը, Հ.Ավանեսյանը, Է.Հարությունյանը ներկայացրին պրակտիկայի անցկացման այն հաստատությունները, որոնց հետ կնքվել են պայմանագրեր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ամբիոններում մանրամասն քննարկել և ներկայացնել Մասնագիտական պրակտիկայի հարցը:

5. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ քննությունների կզմակերպման մասին հարցը ֆակուլտետում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Ա. Բաղդասարյանը հանձնարարեց ամբիոններին նախապատրաստվել ընթացիկ քննությունների անցկացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

6. ԼՍԵՑԻՆ՝ Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի դասընթացներում հետազոտական բաղադրիչ ներմուծելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հ. Ավանեսյանը, Գ. Շահվերդյանը, Ն. Խաչատրյանը: Նրանք նշեցին ուսանողներին հետզոտական աշխատանքներում ներգրավելու կարևորության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Քննարկել ամբիոններում և տալ առաջարկություններ:

7. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ Գիտապետկոմի թեմատիկ ֆինանսավորման ընթացիկ հաշվետվությունները: ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գիտական թեմաների ղեկավարներ Վ. Պապոյանը, Հ. Ավանեսյանը, Ն.Խաչատրյանը, Է.Հարությունյանը ներկայացրեցին իրենց գիտական թեմաների հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

8. Ընթացիկ հարցերի քննարկում:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս Սարգսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019 թվականի հոկտեմբերի 9-ին կայացած Փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. ԵՊՀ 100-ամյակին նվիրված պարգևատրումների մասին հարցը

ԼՄԵՑԻՆ՝ ԵՊՀ 100-ամյակին նվիրված պարգևատրումների մասին հարցը:

Նիստին մասնակցում էր ԵՊՀ պրոռեկտոր Է. Ասրիյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Ա. Բաղդասարյանը նշեց, որ ԵՊՀ 100-ամյակի կապակցությամբ պրոռեկտոր Է. Ասրիյանը պարգևներ կշնորհի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին: Պրոռեկտոր Է.Ասրիյանը հանձնեց ոսկե, արծաթե շքանշաններ, ինչպես նաև պատվոգրեր և շնորհակալագրեր:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս Սարգսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019 թվականի նոյեմբերի 12-ին կայացած Փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի ընդլայնված գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկանի և ֆակուլտետի 1 տարվա
աշխատանքների հաշվետվությունը

Նիստը նախագահող ընտրվեց Ն. Խաչատրյանը:

Նիստին մասնակցում էին ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Գ. Գևորգյանը և պրոռեկտոր Է.
Ասրիյանը:

Հաստատվեց օրակարգը:

ԼՄԵՑԻՆ՝ Դեկան Ա. Բաղդասարյանի 2018-19 ուստարվա հաշվետվության հարցը:

Ա. Բաղդասարյանը ներկայացրեց Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2018-
19 ուստարվա աշխատանքների հաշվետվությունը, որը համապատասխանում է ԵՊՀ
զարգացման ծրագրին: Դեկանը մի քանի ուղղություններով ներկայացրեց ֆակուլտետի
աշխատանքը՝ ուսումնական, գիտական և գիտահետազոտական: Կատարվել են
բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերի նորացում, բացվել են
մագիստրոսական նոր ծրագրեր, կազմակերպվել են պրակտիկաներ տարբեր
հաստատություններում, որոնց հետ համալսարանը համագործակցում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ս. Ջաքարյանը, Հ. Ավանեսյանը, Ն. Խաչատրյանը, Հ. Հովհաննիսյանը:
Նրանք դրական գնահատեցին դեկանի և ֆակուլտետի մեկ տարվա աշխատանքը:

Ռեկտորի պաշտոնակատար Գ. Գևորգյանը նիստի վերջում պատասխանեց ներկաների
հարցերին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկանի 2018-19 ուստարվա
աշխատանքների հաշվետվությունը գնահատել դրական:

Նիստի նախագահ՝ Ն. Խաչատրյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2019 թ. նոյեմբերի 27-ին կայացած փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը
2. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝ Առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ամբիոնների կատարած աշխատանքը ատեստավորման վերաբերյալ: Բոլոր ամբիոնների վարիչները՝ ՍԶաքարյանը, Գ.Շահվերդյանը, Էդ.Հարությունյանը, Ն.Խաչատրյանը, ներկայացրեցին ատեստավորում անցած իրենց ասպիրանտների կատարած հիմնական աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ատեստավորել ամբիոնների կողմից ներկայացված բոլոր ասպիրանտներին:

2. Քննարկվեցին ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ Ա.Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս.Սարգսյան

2019 թվականի դեկտեմբերի 9-ի Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Պրոֆեսորի գիտական կոչման թեկնածության առաջադրում:
2. 2019-20 թթ. ուստարվա առաջին կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում:
3. 2019-20 ուստարվա հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում:
4. 2019-20 ուստարվա հեռակա ուսուցման ասպիրանտուրա ընդունվելու երաշխավորման հարցը:
5. Պրոֆ. Ս. Զաքարյանի Գ. Տաթևացու «Բարոյագիտական ուսմունքը» մենագրության տպագրության երաշխավորման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ Պրոֆեսորի գիտական կոչման թեկնածության առաջադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց Վ. Պապոյանի դիմումը պրոֆեսորի կոչման համար: Նշեց, որ մրցութային հանձնաժողովը քննարկել և տվել է իր դրական եզրակացությունը: Հ. Ավանեսյանը ներկայացրեց Վ. Պապոյանի գիտական գործունեությունը:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց հանձնաժողով՝ Ս. Զաքարյանի նախագահությամբ, անդամներ՝ Ա. Հակոբջանյան և Է. Աթանեսյան: Գիտական խորհրդի 32 անդամներից ներկա էին 31-ը, կողմ քվեարկեց 31-ը, դեմ և անվավեր թերթիկներ չկային:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Փիլիսոփայության և հոգեբանության գիտխորհրդի կողմից Վ. Պապոյանին երաշխավորել պրոֆեսորի գիտական կոչման առաջադրման համար:

2. ԼՍԵՑԻՆ՝ 2019-20 ուստարվա առաջին կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին հարցը:

Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ամբիոնների տված տեղեկատվությունը ընթացիկ քննություններին նախապատրաստվելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ս. Զաքարյանը, Հ. Ավանեսյանը, Գ. Շահվերդյանը: Նրանք ներկայացրեցին իրենց ամբիոններում կատարված նախապատրաստական աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ 2019-20 ուստավա հեռակա ուսուցմամբ մագիստրոսական թեզերի նախապատրաստական աշխատանքների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամբիոնների վարիչները ներկայացրեցին թեզերի նախապաշտպանության արդյունքները, որոնք գոհացուցիչ էին: Բոլոր ուսանողներն անցել են նախապաշտպանությունը և թույլատրվել՝ մասնակցելու պաշտպանությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ՝ 2019-20 ուստարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրա ընդունվելու երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հ. Ավանիսյանը, Ն. Խաչատրյանը, Հ. Հովհաննիսյանը: Նշեցին, որ հեռակա ասպիրանտուրա են ընդունվել արժանիները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել ամբիոնների ներկայացրած թեկնածուներին:

5. ԼՍԵՑԻՆ՝ Պրոֆ. Ս. Զաքարյանի «Գ. Տաթևացու բարոյագիտական ուսմունքը» մենագրության տպագրության երաշխավորման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գ. Սողոմոնյանը, Հ. Հովհաննիսյանը: Նրանք նշեցին, որ մենագրությունը քավականին քարձարժեք է և արժանի է տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել մենագրությունը տպագրության:

6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ Սոցիալական և կլինական հոգեբանության, Անձի հոգեբանության և Կիրառական հոգեբանության կենտրոնի առաջարկած մագիստրոսական 3 ծրագրերի մասին հարցը:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

